## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշենի համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.Առատաշեն, Հեռ. (0231)62328 ,
aratashen.armavir@mta.gov.am

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

N 269
*26 դեկտեմբեր 2018թ.*

Հարգարժան պարոն Մաթևոսյան.

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 10 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր՝14 էջ:

**Համայնք ղեկավար՝** **Վահրամ Հարությունյան**

*Կափ.* '

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 50

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
ԽԱԶԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի
Թիվ 10 նիստի N50 որոշման

ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. Առատաշեն համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Առատաշեն համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին

3.Համայնքի սեփականության՝ համայնքապետարանի, համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկի՝ <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության, <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, և <<Առատաշենի բուժամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատում

4. Առատաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքն աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին

5. Գումար հատկացնելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2018թվականի <<Բյուջեն հաստատելու մասին>> թիվ 45-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N51-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2019թվականի բյուջեն՝

ա) եկամուտների գծով՝ 72131.0 հազ. դրամ

բ) ծախսային գծով՝ 72131.0 հազ.դրամ

գ) դեֆիցիտը՝ 0 հազ. դրամ

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի.

4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի.

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը ( պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի.

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի.

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.

8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև.

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 50%-ը:

9. Թույլատրել Առատաշեն համայնքի 2019թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեի հատվածում չկանխատեսված ծախսերի և նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորումը իրականացնելուն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ
2. ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ
5. ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ
6. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ
7. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 52

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ՝ <<ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ՄՇԱԿՈՒՅԹ>> ՄԻԱՑՅԱԼ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ, <<ԱՌԱՏԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ -Ի, ԵՎ <<ԱՌԱՏԱՇԵՆԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՊՈԱԿ-Ի ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի սեփականության՝համայնքապետարանի, համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկի՝ <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության ու <<Առատաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի, <<Առատաշենի բուժամբուլատորիա>> ՊՈԱԿ-ի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված 1-ի, 2-ի, 3-ի, 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 53

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող

1) գյուղատնտեսական նշանակության V-րդ կարգի վարելահողեր՝

ա) 0.2925հա մակերեսով (ծածկագիր 04-013-0067-0005)

բ) 0.2647հա մակերեսով (ծածկագիր 04-013-0067-0004) և

2) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք՝

ա) 0.0524հա մակերեսով (ծածկագիր 04-013-0051-0014)

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնել Հայաստանի Հանրապետության

օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգին համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 54

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2018թվականի բյուջեի 10.7.1-ի /սոցիալական օգնություն/4729 հոդվածից համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելված 1-ի, 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

Համայնքի ղեկավար՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի
Թիվ 10 նիստի N54որոշման

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սարկիսով Մնացական Մուրադի — 40.000 (քառասուն հազար) դրամ
2. Վարդանյան Լուսին Սուրիկի — 30.000 (երեսուն հազար) դրամ
3. Սիմոնյան Վերա Հովակիմի — 30.000 (երեսուն հազար) դրամ
4. Սահակյան Խաչիկ Գնուշի — 30.000 (երեսուն հազար) դրամ
5. Գասպարյան Գագիկ Արշակի — 20.000 (քսան հազար) դրամ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Առատաշեն համայնքի
ավագանու 2018թվականի դեկտեմբերի 19-ի
Թիվ 10 նիստի N54 որոշման

## ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵԿՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Անդրեասյան Գրիգոր Սուրիկի — 20.000 (քսան հազար) դրամ
2. Բաղդասարյան Արմեն Հրաչի — 20.000 (քսան հազար) դրամ
3. Տերտերյան Արսեն Գրիշայի — 20.000 (քսան հազար) դրամ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, (0231)62328 aratashen.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 55-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ <<ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով, 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 20-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի 2018թվականի <<Բյուջեն հաստատելու մասին>> թիվ 45-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՀԱՐՈՆՅԱՆ ՆԵԼԼԻ

ԵՐԱՆՅԱՆ ՍԵԴՐԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԵՐԻ

ՄԱԿԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Առատաշեն
համայնքի ավագանու
2018թվականի դեկտեմբերի 19-ի
N55-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-ի ԹԻՎ 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1.ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՎ

1) 01.12.2018 թվականի դրությամբ համայնքից բացակայում են գյուղ. նշանակության հողերի 216 համասեփականատերեր , որոնց հողերի մեծ մասը չի մշակվում և հողերի հարկերի գումարը կազմում է 3071.0հազ. դրամ:

Հաշվի առնելով վերը նշվածը, Առատաշեն համայնքի 2018թվականի բյուջեի եկամուտները՝ «Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար» հոդվածը պակասեցնել 3071.0 հազ. դրամով՝

12380.0 հազ.դրամը դարձնել 9309.0 հազ. դրամ:

2.ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

2.1. 6.3.1 (Առատաշենի ջրամատակարարում)-ի

1) 4657 հոդվածը պակասեցնել - 3000,0 հազ.դրամով

2) 4239հոդվածը պակասեցնել - 71,0 հազ.դրամով